ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 մարտի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

30
(2880)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈ՞Ւ ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆԸ ԱԶԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ ԳՐԵՑ

Հայաստանի շուրջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական լուրջ զարգացումների ֆոնին Հայաստանի հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանը օրերս հայտարարեց, որ ազատման դիմում է գրել:

Արդեն նախկին դեսպանը փակագծեր չէր բացել իր հրաժարականի պատճառների մասին՝ միայն իր գրառման մեջ ակնարկելով, թե արտաքին քաղաքական հարցերում տարաձայնություններ ունի գործող իշխանությունների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթին որոշ մանրամասներ են հայտնի դարձել Էդմոն Մարուքյանի հեռանալու պատճառների մասին:

Այսպիսով, հիմնական պատճառն այն է, որ Մարուքյանը ամբողջությամբ տապալված է համարել Փաշինյանի իշխանության հնարած խաղաղության օրակարգը, դրա մասին Էդմոն Մարուքյանը հենց Նիկոլ Փաշինյանի մոտ էլ բարձրաձայնել է՝ ասելով, որ որեւէ առաջընթաց չկա բանակցություններում, իսկ խաղաղության օրակարգը տեղում դոփում է, փոխարենը Ադրբեջանը միակողմանի պահանջներ է դնում Հայաստանի առջեւ, որոնք Հայաստանը կատարում է:

Մարուքյանն իր շրջապատին բացատրել է, որ իր հեռանալու պատճառներից է եղել նաեւ այն, որ հայկական կողմը համաձայնել է կատարել Ադրբեջանի հերթական անհեթեթ պահանջը, այն է՝ միջազգային բոլոր ատյաններից հրաժարվել Ադրբեջանի դեմ ներկայացված հայցերից:

Ընդ որում՝ երկու երկրների միջեւ նախապես այս պայմանավորվածությունը ձեռք է բերվել փոխադարձության սկզբունքով, սակայն, ինչպես միշտ, Ադրբեջանը խախտել է այն ու չի հրաժարվում իր հայցերից, սակայն Փաշինյանը հրահանգել է հայկական կողմի պատասխանատուներին պատրաստել դիմումներ, որ հրաժարվեն Ադրբեջանի դեմ հայցերից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Էդմոն Մարուքյանի հեռանալու պատճառներից մեկն էլ եղել է իր թվիթերյան գրառումներից մեկը Խոջալուի ջարդերի մասին, որից հետո Արարատ Միրզոյանի համակարգման տակ գտնվող ԱԳՆ-ից զանգել, նկատողություն են արել Մարուքյանին ու արգելել այլեւս նման բնույթի գրառումներ անել:

Ավելին՝ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Էդմոն Մարուքյանին հրաժարականի ակնարկն արվել է ոչ թե Փաշինյանի, այլ հենց ԱԳՆ-ի «շուրթերով»:

Ահա այս բոլոր իրադարձությունները կուտակել են կրքեր նաեւ Էդմոն Մարուքյանի «Լուսավոր Հայաստան»-ում:

Բանը հասել է նրան, որ ԼՀԿ-ականները Մարուքյանից պահանջել են՝ պետք է հրաժարական տա կամ դեսպանի, կամ կուսակցության նախագահի պաշտոնից:

ԼՀԿ-ում ասել են, որ այս իշխանությունների օրոք պաշտոն զբաղեցնելը միայն վնասում է իրենց, ու թեեւ շատ հարցերում համաձայն չեն գործող իշխանությունների հետ, բայց չեն կարողանում բարձրաձայնել դրա մասին ու որպես իսկական ընդդիմադիր հանդես գալ:

Ահա արդյունքում Էդմոն Մարուքյանը որոշել է հրաժարվել ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոնից:

Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունը (ՊՊԾ) 2024 թվականի հունվար ամսին ձեռք է բերել 1 մլն 568 հազար դրամ արժողությամբ գրասենյակային աթոռ, փոքր բազմոցներ, ղեկավարի բազկաթոռ, լրագրասեղան եւ սեղաններ: Ըստ պայմանագրերից մեկի՝ գնվել է 16 գրասենյակային աթոռ, որոնց մեկ հատը արժեցել է գրեթե 40 հազար դրամ. դրանց բնութագիրը հետեւյալն է. «Կարկասը՝ օվալաձեւ մետաղից՝ գալվանապատված նիկելով, արմնկակալները՝ մետաղական՝ երեսպատված բնական փայտով: Նստատեղը եւ թիկնակը մեկ ընդհանուր՝ 1,2սմ հաստությամբ նրբատախտակից՝ երեսպատված բարձրորակ, 3սմ հաստությամբ սպունգով, պաստառապատված բարձրորակ շագանակագույն էկո կաշվով: Կարկասի խողովակները՝ միմյանց միացված զոդման եղանակով, իսկ բաց մասերը՝ փակված պլաստիկ կափարիչներով»: Առանձին պայմանագրով գնվել է 1 փոքր բազմոց, որն արժեցել է 90 հազար դրամ: Բազմոցի տեխնիկական բնութագիրը հետեւյալն է. «Նվազագույն պարամետրերը. արտաքին չափսերը LxխxԲ(սմ)՝ 180x80x92, կարկասը՝ փայտ, լամինացված ԴՍՊ, լամինացված ԴՎՊ, կոնֆիգուրացիա՝ չբացվող»: Երրորդ պայմանագրով, որի արժեքը կազմել է 839 հազար դրամ, գնվել է 6 աթոռ, լրագրասեղան եւ սեղաններ, որոնցից 4-ը արժեցել է 336 հազար դրամ, 1-ը՝ 11 հազար դրամ, 1-ն էլ՝ 492 հազար դրամ: Հավելենք նաեւ, որ նման ճոխ գնումներ կատարել է մի կառույց, որը գրեթե 1 տարի չուներ ղեկավար, սակայն օրերս, վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, այդ պաշտոնում նշանակվեց ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Գասպարյանը: Երեւի ՊՊԾ-ն Գասպարյանին ուզում է դիմավորել նոր գույքով, դրա համար էլ թարմացնում են կահավորանքը:

Դատական համակարգում բուռն քննարկումներ են. մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին լուրեր հասան, որ չի բացառվում ՍԴ դատավորի թափուր տեղի համար Բալայանը կրկին առաջադրվի, սակայն դեռ վերջնական որոշում կայացված չէ: Հիշեցնենք՝ քանի որ իշխող ուժը՝ ՔՊ-ն, ԱԺ-ում բոյկոտեց ՍԴ դատավորի պաշտոնում Դատավորների ընդհանուր ժողովի կողմից առաջադրված Դավիթ Բալայանի թեկնածության քվեարկությունը, դատավորները էլի պետք է հավաքվեն, կրկին պիտի ՍԴ դատավորի թեկնածու ընտրեն եւ ուղարկեն ԱԺ-ի հաստատմանը: Դատական համակարգում ակտիվ քննարկում են, թե ում ընտրեն, որ ՔՊ-ի սրտով լինի: Քաղաքական իշխանությունը իր «սրտի» թեկնածուին է փորձում առաջ տանել, իսկ դատական համակարգը չի հանձնվում եւ ամեն գնով իր թեկնածուին է առաջ տանելու: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ չի բացառվում, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ Դավիթ Խաչատուրյանը, կրկին առաջադրվի, որին դատավորները մի անգամ արդեն մերժել էին:

Ողջ իրավապահ համակարգը արդեն 10 օրից ավել է՝ գիշերը ցերեկ արած՝ փորձում է բացահայտել ՔՊ-ի գրասենյակի եւ ՔՊ-ական պատգամավոր Գուրգեն Արսենյանի գրասենյակի դիմաց հայտնված նռնակի կամ դրա մուլյաժի գործը՝ պարզելու, թե ով կամ ովքեր են պայթուցիկ տեղադրողները, բայց ապարդյուն: Իրավապահ համակարգից «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ անգամ այս հարցով անհանգստացել են ՔՊ-ականները, թե ինչ նորություն կա. պատասխանը մեկն է եղել՝ աշխատում ենք, դեռ հստակ ոչինչ չկա: Ասել է թե՝ փնտրում են փնտրում, վարկածներ առաջ քաշում, բայց սայլը տեղից չի շարժվում: Հիշեցնենք, որ փետրվարի 26-ին ՔՊ-ի գրասենյակից իրավապահներին զանգահարել է գրասենյակի քարտուղար Հասմիկը եւ հայտնել, որ գրասենյակի դիմաց տարօրինակ տոպրակ կա, խնդրում է իրավապահներին գալ եւ տեսնել, թե ինչ կա տոպրակի մեջ: Ավելին՝ ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները նախնական վարկածով պարզել են, որ պայթուցիկը ՔՊ-ի գրասենյակի դիմաց տեղադրել են հենց նույն օրը, երբ պայթուցիկ է տեղադրվել Գուրգեն Արսենյանի գրասենյակի շենքի մոտ: Փետրվարի 22-ին Միավորված աշխատանքային կուսակցության նախագահ, ՔՊ պատգամավոր Գուրգեն Արսենյանի կուսակցության շենքի մոտ էլ են պայթուցիկ գտել, աշխատակիցներն անգամ այն տարել էին ներս, չէր պայթել:

ԶՐՈՒՅՑ

«ԴԱ ՄԻ ՍՈՒՐ ՍԱՅՐ Է, ՈՐԻ ՎՐԱՅՈՎ ՆԱ ՔԱՅԼՈՒՄ Է»

«Լուսավոր Հայաստան» կուսակցության խորհրդի նախագահ Դավիթ Խաժակյանը ArmLur.am-ի հետ զրույցում խոսել է ԵՄ անդամակցության, ՀԱՊԿ-ի հետ տարաձայնությունների մասին:

-Պարոն Խաժակյան, Հայաստանը քաղաքական լրջագույն շրջադարձերի փուլում է կարծես, ու տպավորություն է, որ Հայաստանի իշխանությունները իրոք պատրաստվում են աշխարհաքաղաքական վեկտորի փոփոխության գնալ. հայտարարում են, որ Հայաստանը պատրաստ է Եվրամիության անդամության թեկնածու դառնալ, մյուս կողմից՝ Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, որ ՀԱՊԿ-ում ՀՀ անդամակցությունը սառեցված է: Ձեզ համար հասկանալի՞ է ՀՀ իշխանությունների քայլերի բովանդակությունը:

-Իհարկե, ընդհանուր տրամադրությունները իշխանության հասկանալու համար կարելի է տարբեր պատգամավորների խոսքեր լսել, բայց չեմ կարծում, թե արտաքին քաղաքականության իրացման ընթացքում իմաստ ունի հենվել պատգամավորների խոսքերի վրա: Հասկանալի է, որ հիմնական քաղաքական գիծը ընտրում է վարչապետը, եւ պետք է հասկանալ՝ իր պատկերացումներն ինչպիսին են: Առայժմ ՀԱՊԿ-ից դուրս գալու մտադրության մասին չի հնչել, բայց, իհարկե, խոսույթի փոփոխություն կա. եթե մեկ տարի առաջ ասվում էր՝ մենք վախենում ենք, որ ՀԱՊԿ-ը դուրս չգա այս տարածաշրջանից, հիմա ասում են՝ դե եթե պետք լինի, դե ֆակտո սառեցված է, դե յուրե էլ կսառեցվի: Ենթադրելի է, որ խոսքը գնում է դուրս գալու մասին, բայց եթե մենք մի քիչ սպեկուլյատիվ փորձենք մտածել՝ ի վերջո պատրաստ է դրան իշխանությունը, պատրաստ չէ, ո՛չ, կարծում եմ, ներքին տիրույթում է ընկալվում, ո՛չ էլ արտաքին:

-Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել այս հայտարարությունը՝ ասում է՝ ըստ էության սառեցված է, ՀԱՊԿ-ի նիստերին չի մասնակցում հայկական կողմը:

-Այո, դա սաբոտաժի մի տեսակ է, որը, իհարկե, կապված է ՀԱՊԿ-ի՝ իր պարտականությունները չկատարելու հետ, եւ սաբոտաժով Փաշինյանը փորձում է նաեւ աջակցություն բերել Արեւմուտքից, որը մասնակի ստացվում է, բայց դա մի սուր սայր է, որի վրայով նա քայլում է, որտեղ պետք է շատ ճշգրիտ գործողություններ անել, որովհետեւ, իհարկե, դու կարող ես նման դեմարշեր իրականացնել եւ որոշակի օգուտներ ստանալ, բայց կտրուկ շարժումներն այստեղ վտանգավոր են: Այդ գործողություններն էլ իրենց հերթին պետք է հիմնավորված եւ ճիշտ պահին լինեն: Միշտ չէ, որ մի բան ճիշտ է անել հենց այդ պահին. պահի գործոնը քաղաքականության մեջ շատ կարեւոր է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

ԴՐՎԱԾ Է ՀՀ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

«Առանց չափազանցնելու, այս օրերին դրված է Հայաստանի պետականության գոյության հարցը»,- մարտի 5-ին՝ Չարենցավանում հանրության հետ հանդիպման ժամանակ, նշեց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանը՝ հավելելով, որ Հայաստանի շուրջը ձեւավորվել է նոր մարտահրավերներով ու սպառնալիքներով իրավիճակ, եւ պետք է քննարկել դրանից դուրս գալու ուղիները:

«Ցավոք, այն խնդիրները, որ մենք դրել ենք մեր առջեւ, դեռեւս լուծված չեն, ծանրագույն մարտահրավերները կանգնած են մեր առջեւ: Պատերազմից հետո ակնհայտ էր, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու, երկիրը պետական, ազգային դիմագիծ վերադարձնելու համար իշխանությունը, որը բերեց պարտություն, պետք է հեռանա: Նախորդ 3,5 տարիների ընթացքում մեր գլխավոր օրակարգը եղել է իշխանափոխությունը, քանի որ այս իշխանությունների դեպքում հնարավոր չէ ստեղծված իրավիճակից դուրս գալ: Միակ ելքը սրանից ազատվելն է: Ցավոք, մեր օրակարգը մեծ համաժողովրդական աջակցություն չի ստացել:

Թուրք-ադրբեջանական տանդեմը Արցախում ցեղասպանություն իրականացնելուց հետո արդեն, Հայաստանի տարածքային պահանջներից զատ, դնում է ինքնության ոչնչացման խնդիր: ՀՀ իշխանությունները, սրան դիմագրավելու, դիմադրելու, սահմանները պաշտպանելու փոխարեն, հետեւողականորեն կատարում են Թուրքիայի ու Ադրբեջանի պահանջները:

Բացի դրանից, այս իշխանությունների արտաքին քաղաքականության արդյունքում Հայաստանը դարձել է աշխարհաքաղաքական ուժային կենտրոնների ազդեցությունների բախման գոտի: Հայաստանի ղեկին ոչ հայկական իշխանություններ են, որոնք շարունակում են թշնամական ծրագրերը»,-ասաց Սաղաթելյանը: Խոսելով նոր Սահմանադրություն ընդունելու իշխանության ծրագրերից՝նա ասաց, որ դա Թուրքիայի ու Ադրբեջանի պահանջն է, եւ դա կործանման ճանապարհ է: «Մենք պետք է կազմակերպենք ժողովրդին, դուրս գանք պայքարի եւ այդ հանրաքվեն վերածենք այս իշխանության անվստահության հանրաքվեի եւ դրանից անմիջապես հետո հասնենք իշխանափոխության: Մենք նույնիսկ չպետք է թույլ տանք, որ այդ հանրաքվեն տեղի ունենա: Սա մեկ ճանապարհ է:

Երկրորդը՝ գիտեք, որ Ադրբեջանի հետ քննարկվում է կապիտուլյացիայի պայմանագրի ստորագրման հարց: Սա ներկայացնում են իբրեւ խաղաղության պայմանագիր: Այդ փաստաթղթին մենք ծանոթ ենք: Դա խաղաղության հետ կապ չունեցող փաստաթուղթ է, այնտեղ չկա որեւէ կետ, որ մեր օգտին է: Այդ փաստաթղթով Ադրբեջանը չի ճանաչում Հայաստանի 29 800 քկմ տարածքը: Դրանով նույնիսկ սահմանագծման եւ սահմանազատման հարցը չի լուծվում, դա թողնում են հետագային: Կարճ ասած, դա մի փաստաթուղթ է, որով Արցախի օկուպացիան փորձում են լեգիտիմացնել, եւ դրանով չի զսպվում Ադրբեջանի հետագա ագրեսիան»,- ընդգծեց Իշխան Սաղաթելյանը:

Նա նկատեց, որ այսօր չկա որեւէ փաստաթուղթ, որով Արցախը մնալու է Ադրբեջանի կազմում: «Արցախն այսօր էթնիկ զտման հետեւանքով թշնամու ենթակայության տակ է: Նիկոլ Փաշինյանի բանավոր հայտարարությունները իրավական ու լեգիտիմ հիմք չեն: Դրա համար է Ադրբեջանը շտապում, որ ունենա իրավական փաստաթուղթ, որը կվավերացվի նաեւ ՀՀ ԱԺ-ի կողմից, որ օրինականացնի արցախահայության նկատմամբ իրականացրած ցեղասպանությունը: Եթե այս ամենին լինի համարժեք հակազդեցություն, մենք միասնաբար սա կկանխենք»,-ասաց ընդդիմադիր գործիչը:

ԵՄ-Ն ՍԱՏԱՐՈՒՄ Է

ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 55-րդ նիստում ԵՄ պատվիրակության ներկայացուցիչն իր ելույթում անդրադարձել է աշխարհի տարբեր կետերում մարդու իրավունքների իրավիճակին, այդ թվում՝ Ադրբեջանի կողմից Արցախում իրականացված էթնիկ զտմանը: Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում է. «ԵՄ-ն ընդգծում է իր շարունակական աջակցությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն ու տեւական խաղաղության հաստատմանը, որը հիմնված է ինքնիշխանության, սահմանների անձեռնմխելիության եւ տարածքային ամբողջականության ճանաչման սկզբունքների վրա՝ 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրին իրենց հանձնառության համաձայն:

ԵՄ-ն լիովին հավատարիմ է մնում Բրյուսելի կարգավորման գործընթացի միջոցով այդ նպատակին ուղղված ջանքերը դյուրացնելուն եւ կողմերին կոչ է անում բարեխղճորեն ներգրավվել գործընթացում: ԵՄ-ն հավասարապես ընդգծում է Ղարաբաղի հայերի իրավունքների եւ անվտանգության ապահովման, ինչպես նաեւ փախստականների եւ տեղահանվածների՝ Լեռնային Ղարաբաղ կամավոր, անվտանգ, արժանապատիվ եւ կայուն վերադարձի համար պայմանների ստեղծումը, մասնավորապես՝ իրենց տներում արժանապատիվ ապրելու իրավունքը՝ առանց ահաբեկման կամ խտրականության:

Բացի այդ, տեղի բնակչության մշակութային ժառանգությունը եւ սեփականության իրավունքները պետք է արդյունավետորեն պաշտպանվեն եւ երաշխավորվեն: Բացի այդ, չափազանց կարեւոր է ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի հրամանների լիարժեք կատարումը»:

ՊԵՏՔ Է ԸՆԴՈՒՆԵՐ

Թուրքիայի նախկին փոխվարչապետ, նախկին ԱԳ նախարար եւ ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցության նախկին նախագահ Հիքմեթ Չեթինը սկանդալային հայտարություն է արել լրատվամիջոցի հետ հարցազրուցում:

Թուրքական Artigercek-ի հետ զրույցում Հիքմեթ Չեթինը հայտարարել է, որ Թուրքիայի իշխանությունները պետք է հասարակությանը ներկայացներ Դերսիմի կոտորածները եւ 1915-ի դեպքերը: Նա նշել է, թե պետությունը պետք է նշեր, որ շատ տխրեցնող դեպքեր են տեղի ունեցել, եւ ներողություն խնդրեր:

Հիքմեթ Չեթինը հիշեցրել է, որ իր՝ որպես ԱԳ նախարար պաշտոնավարման ժամանակ է Հայաստանը անկախացել, եւ Թուրքիան առաջին երկրներից է եղել, որ ճանաչել է Հայաստանի անկախությունը:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԳԱԶԱՅԻՆ

«Հայաստանը ցավում է Գազայում ռազմական գործողությունների սրման հետեւանքով տասնյակ հազարավոր անմեղ զոհերի փաստի կապակցությամբ»,- մարտի 5-ին՝ Կահիրեում Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահ Աբդել Ֆաթթահ աս-Սիսիի հետ հանդիպումից հետո, իր հայտարարության մեջ նշել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նա նաեւ նշել է. «Մենք ինքներս վերապրել ենք քաղաքացիական բնակչության եւ քաղաքացիական ենթակառուցվածքների նկատմամբ հարձակումների արհավիրքը եւ միանում ենք Գազայում անհապաղ հրադադար հաստատելու միջազգային հանրության կոչերին: Այս հարցում բարձր ենք գնահատում Եգիպտոսի կողմից իրականացվող քայլերը՝ մարդասիրական օգնության անխափան մուտքը Գազա ապահովելու, վիրավոր պաղեստինցիներին ընդունելու եւ օտարերկրացիներին տարհանելու հարցերում:

Մենք նաեւ քննարկեցինք եւ Եգիպտոսի մեր գործընկերների աջակցության ու խորհրդատվության կարիքը ունենք՝ մեր կողմից հումանիտար օգնություն Գազա հասցնելու հետ կապված, եւ շնորհակալություն նախագահ աս-Սիսիին այս հարցում օգնության պատրաստակամության համար: Արտգործնախարարներն այս հարցով կզբաղվեն: Ինչ վերաբերում է պաղեստինա-իսրայելական հակամարտությանը, ապա Հայաստանը մշտապես աջակցել է միջազգային հանրության կողմից որդեգրած «երկու պետությունների» սկզբունքին»:

ՍԱՀՄԱՆԸ ԲԱՑ Է

Ռուս գործընկերները չեն հաստատում տեղեկությունը, որ Ռուսաստանը որոշել է մարտի 6-ից արգելել հայկական մեքենաների անցումը Վերին Լարս անցակետով: Այս մասին մարտի 5 ասել է ՌԴ-ում ՀՀ դեսպանության Վերին Լարսի անցակետում գտնվող մաքսային կցորդ Վահան Հակոբյանը՝ մեկնաբանելով լրատվամիջոցների համապատասխան տեղեկատվությունը:

«Ես ծանոթ եմ այս տեղեկատվությանը, որը տարածվել է լրատվամիջոցներով,սակայն ռուս գործընկերներն ասացին, որ նման խոսակցություններ կամ հրահանգներ չեն եղել: Նրանք հավելեցին, որ այս մասին առաջին անգամ են լսում:

Այս պահին սահմանափակումներ չկան, սահմանը բաց է, բեռները գրանցվում են: Ոչ մի խոչընդոտ չկա»,- նշել է Հակոբյանը:

Նա ասաց, որ անցակետում մեքենաների կուտակումներ չկան, ճանապարհը բաց է, մեքենաներն անցնում են սովորականի պես:

ՀՀ-ԵԳԻՊՏՈՍ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՆԱԵՎ ՆՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

«ՀՀ վարչապետի՝ Եգիպտոս կատարած այցը հաստատում է երկու կողմերի հետաքրքրությունն ու վճռականությունը համագործակցության զարգացման եւ ամրապնդման ճանապարհին: Այդ համագործակցությունը կիրացնի երկու ժողովուրդների շահերը՝ նաեւ հենվելով պատմական երկարամյա հարաբերությունների վրա, որոնք կապում են երկու երկրներին»,- ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպումից հետո հայտարարել է Եգիպտոսի Արաբական Հանրապետության նախագահ Աբդել Ֆաթթահ աս-Սիսին՝ հավելելով, որ հազարավոր հայեր ապրել են Եգիպտոսում եւ իրենց նպաստը բերել Եգիպտական հասարակության զարգացման մեջ տարբեր ոլորտներում՝ բաղաքական, տնտեսական, մշակութային եւ արվեստի:

«Այսօր մեր կողմից անցկացրած բանակցությունները հաստատել են երկու երկրների սպասումները, որպեսզի ավելացնենք առեւտրաշրջանառության ծավալները, ինչպես նաեւ ուժեղացնենք ներդրումային գործոնը երկու կողմերի միջեւ, ինչը կհամապատասխանի երկու երկրների միջեւ առկա քաղաքական հարաբերությունների մակարդակին: Համագործակցությունը կարող է զարգանալ նոր ոլորտներում եւս, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների, արհեստական բանականության, սննդային եւ դեղագործական արդյունաբերության: Նաեւ այսօրվա խորհրդակցությունների ընթացքում հաստատել ենք եգիպտական փորձի փոխանակման պատրաստակամությունը՝ ենթակառուցվածքների, շինարարության, տրանսպորտի եւ էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտներում: Ինչպես նաեւ մենք օգուտ կքաղենք հայկական փորձից, կոնկրետ հայկական այն ընկերություններից, որոնք աչքի են ընկնում արհեստական բանականության ոլորտում»,- ասել է աս-Սիսին:

Քննարկումների ընթացքում առանձնահատուկ կերպով ընդգծվել է տնտեսական եւ տեխնիկական համագործակցության ոլորտում երկկողմ հանձնաժողովների համատեղ նիստերի կիրառման անհրաժեշտությունը:

Եգիպտոսի նախագահը ՀՀ վարչապետին ներկայացել է այն ջանքերը, որոնք Եգիպտոսը գործադրում է Գազայի օկուպացված հատվածում, ինչպես նաեւ արեւմտյան ափում հրադադարի հասնելու համար, որով հնարավորություն կստեղծվի պաղեստինյան հիմնահարցում ինքնավար Պաղեստինի Հանրապետության ձեւավորմանը 1967 թվականի հունիսի 4-ի սահմանագծի հիման վրա, եւ նրա մայրաքաղաքը կլինի Արեւելյան Երուսաղեմը:

«Անհրաժեշտ է տարածաշրջանում խաղաղություն հաստատել՝ պատերազմի եւ ավերածությունների փոխարեն: Ինչպես նաեւ այս բանակցությունների ընթացքում հաստատել ենք Եգիպտոսի աջակցությունը ցանկացած նախաձեռնությունների, որոնք ձգտում են խաղաղության եւ կայունության հաստատմանը Հարավային Կովկասի տարածաշրջանում: Մենք մեր ամբողջական աջակցությունն ենք հայտնում երկխոսությանը եւ բանակցային պրոցեսին՝ ձգտելով համապարփակ, արդարացի խաղաղության հաստատմանը: Սա կստեղծի նոր փուլ՝ աճի եւ զարգացման, ինչը կծառայի տարածաշրջանի ժողովուրդների շահերին: Ես իմ հույսն եմ հայտնում, որ այս այցով կլինի շատ կարեւոր քայլ, որպեսզի երկու բարեկամ երկրների միջեւ բոլոր ոլորտներում ամրապնդվի եւ հզորանա համատեղ համագործակցությունը, ինչը կհարստացնի հարաբերությունները եւ պատմական կապերը, որոնք համախմբում են երկու երկրների ժողովուրդներին: Շնորհակալություն, մեծարգո՛ պարոն վարչապետ»,- եզրափակել է իր խոսքը Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ աս-Սիսին:

ՍՊԱՐԱՊԵՏ

«ՔՈ ՍԱՐՔԱԾԸ ՄԵՆՔ ՔԱՆԴԵԼ ԵՆՔ»

«Վազգեն Սարգսյանը՝ որպես առաջնորդ, միասնականության խորհրդանիշ է, եւ նրա կերպարի մեջ մենք պետք է տեսնենք մեր բոլոր մարտական ընկերներին, այստեղ հանգչող բոլոր հրամանատարներին ու զինվորներին»,- մարտի 5-ին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում լրագրողների հետ զրույցում նշեց «Հայաստան» խմբակցության ղեկավար, պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը:

«Այնտեղ, որտեղ Վազգեն Սարգսյանն էր հայտնվում, այնտեղ միանշանակ մթնոլորտ էր ձեւավորում, համախմբվում էին եւ պատրաստ էին գործելու, աշխատելու, պայքարելու:

Մենք Վազգեն Սարգսյանի ժամանակ ձեռք ենք բերել արժեքներ, որոնք պետք է պահպանել: Հենց այնպես ոչինչ չի լինում, պետք է պայքարել: Եթե մենք թույլ լինենք, հակառակորդը, այսօրվա տարածաշրջանի դերակատարները, թուրք-ադրբեջանական տանդեմը անընդհատ մեզ ճնշելու են, իսկ այսօր մենք այդ թուլությունը տեսնում ենք ՀՀ իշխանությունների մոտ: Նրանք ժողովրդին համոզում են, որ պետք է համակերպվել: Ես առավել քան վստահ եմ, որ եթե այսօրվա իշխանությունները լինեին արցախյան առաջին պատերազմի ժամանակ, այն ժամանակ էլ էինք մենք պարտվելու:

Վազգեն Սարգսյանի ժամանակ մենք ֆիդայական ջոկատներից ձեւավորել ենք կանոնավոր բանակ, նրանց զինել ենք: Այդ սպառազինության մեծ մասը ձեռք ենք բերել մեր ռազմավարական գործընկերներից: Այն ժամանակ էլ որեւէ արգելք չի եղել որեւէ երկրից ձեռք բերել սպառազինություն, եւ որքան հնարավոր է եղել, կարողացել ենք ձեռք բերել: Մեր սպառազինության զգալի մասը մենք ուղղակի խլել ենք հակառակորդից որպես ավար մարտական գործողությունների ժամանակ»,-ասաց Սեյրան Օհանյանը:

Նրա խոսքով՝ այս իշխանությունների ժամանակ այդ կանոնավոր բանակը դարձավ անկանոն կազմակերպություն: «Այլ կերպ չի կարելի ասել, երբ երկրի վարչապետն ասում է՝ ով ինչ ունի տանը, թող վերցնի, գնա մարտական գործողություններին մասնակցի: Մոբիլիզացիա չկազմակերպվեց, եւ բանակին թիկունք չկանգնեցին: Ի վերջո, այն սպառազինությունը, որ մենք ձեռք էինք բերել ռազմատեխնիկական համագործակցությամբ եւ որպես ավար, որպես ավար հանձնվեց հենց նույն հակառակորդին:

Ու երբ այսօր գալիս են, ձեւական ծնկի են իջնում սպարապետի շիրիմի առջեւ, դրա փոխարեն իրենք պետք է ամրապնդեին մեր բանակը, մեր պաշտպանությունը:

Այսօր այցելելով սպարապետի շիրիմին՝ մենք ասում ենք՝ քո գործը անմար է, եւ մենք շարունակելու ենք, իսկ այսօրվա իշխանությունները խոստովանում են Սպարապետին՝ Սպարապե՛տ, քո ամեն ինչը, քո ձեռքբերումները, քո սարքածը մենք քանդել ենք եւ այսօր էլ ծնկի իջած կերպով հանձնվում ենք հակառակորդի պահանջներին»,- ասաց Սեյրան Օհանյանը:

ԵՐԵՎԱՆՑԻՆԵՐԸ՝ ԼՈՌԻՈՒՄ

ԹՄՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱՑԱՆՑՈՎ

2024թ. փետրվարի 29-ին ոստիկանության Ստեփանավանի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ երկու երիտասարդ կաղույտ գույնի «Chevrolet Volt» մակնիշի ավտոմեքենայով Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի տարբեր հատվածներում տեղադրել են թմրամիջոցներ եւ բջջային հեռախոսով նկարել են տեղադրման վայրերը՝ հետագայում համացանցով վաճառելու համար:

Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում ոստիկանության ծառայողների կողմից նույն օրը նշված անձինք ավտոմեքենայով հայտնաբերվել են Ստեփանավան քաղաքի «Ձորագետի կիրճ» կոչվող տեղանքում եւ տեղափոխվել ոստիկանության բաժին: Պարզվել է, որ վերջիններս Երեւան քաղաքի 29 եւ 37 տարեկան բնակիչներ են:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնում նույն օրը նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Նշված տղամարդիկ, առերեւույթ իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել են:

Նախաքննության շրջանակում իրականացված վարութային եւ ապացուցողական գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ նշված անձինք նախնական համաձայնությամբ «Տելեգրամ» հավելվածում գրանցված համապատասխան կայքէջի օգտատիրոջ կողմից նախօրոք ուղարկված՝ Արտաշատ քաղաքի վարչական տարածքում գտնվող տեղակայման վայրից 2024թ. փետրվարի 24-ից 25-ին քննությամբ դեռեւս չպարզված անձից իրացման նպատակով ապօրինի ձեռք են բերել ընդհանուր 19,42 գրամ քաշով 34 առանձին, սեւ եւ սպիտակ փաթեթներում փաթեթավորված «Մարի-խուանա» տեսակի թմրամիջոցներ, որոնք փետրվարի 29-ին ավտոմեքենայով տեղա-փոխել են Լոռու մարզ: Հետագայում վարձատրություն ստանալու նպատակով առանձնացված փաթեթները նրանք տեղադրել են Ալավերդի, Ստեփանավան քաղաքների տարբեր վայրերում, որոնք հայտնաբերվել եւ վերցվել են համապատասխան քննչական գործողության արդյունքում:

Դատարանի որոշման հիման վրա՝ խուզարկություն է կատարվել նաեւ «Chevrolet Volt» մակնիշի ավտոմեքենայում, որտեղ հայտնաբերվել եւ վերցվել են ինքնակպչուն ժապավեններով փաթեթավորված ընդհանուր շուրջ 498.11 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցների նմանվող զանգվածներով 385 փաթեթ, ինչպես նաեւ ապակյա սրվակներով հեղուկներ, մետաղյա տարաներ, որոնց մեջ առկա են եղել կասկածելի փոշենման զանգվածներ: Ավտոմեքենայի խուզարկությամբ հայտնավերված զանգվածների պարունակությունը պարզելու նպատակով նշանակվել են համապատասխան փորձաքննություններ:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ նշված երկու երիտասարդներին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է, միջոցներ են ձեռնարկվում իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավված այլ անձանց ինքնությունը, ինչպես նաեւ դեպքի մյուս հանգամանքները լիարժեք պարզելու նպատակով:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՊԱՅԹՈՒՑԻԿ Է ՆԵՏԵԼ

ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանի հարեւանի տուն պայթուցիկ նետած անձանցից մեկին իրավապահները հայտնաբերել են, ու խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Փորձեցինք տեղեկությունը պարզել ՆԳՆ-ից, որտեղից ի պատասխան՝ հայտնեցին, որ մեկ անձ կա կալանավորված, եւ այլ մանրամասներ չհայտնեցին:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ կալանավորվածը խոստովանել է, որ ինքն է պայթուցիկը նետել, իսկ թե ինչ նպատակով, նախաքննությանը չվնասելու համար այս պահին չենք հրապարակում:

ArmLur.am-ը զրուցել էր Նոյ թաղամասի 143/1 տան բնակիչ Արթուր Բաղդասարյանի հետ, որի տան բակում ենթադրյալ հանցագործները պայթուցիկ նյութ էին նետել: Վերջինս մեզ հետ զրույցում հայտնեց, որ դեպքը ո՛չ իր հարազատների, ո՛չ ընտանիքի անդամների հետ չի կարող առնչություն ունենալ: Ավելին՝ վստահեցրեց, որ դեպքից առաջ որեւէ միջադեպ չի եղել, որից դրդված՝ ենթադրյալ հանցագործները կարող էին գալ ու իր բակ պայթուցիկ նյութ նետել: Իսկ թե ինչի են հատկապես իր բակ նետել, Արթուր Բաղդասարյանը նշեց, որ միգուցե կատարվածը թյուրիմացություն է, ու ամեն ինչ կպարզեն իրավապահները:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահ մարմինները պարզել են, որ փետրվարի 10-ին ՔՊ խմբակցության պատգամավոր Գագիկ Մելքոնյանի տան մոտակայքում ռումբի տեղադրումը որեւէ առնչություն չունի նրա գործունեության կամ, առհասարակ, նրա ընտանիքի անդամների հետ: Իրավապահները պարզել են, որ ինքնաշեն պայթուցիկը տեղադրել են Մելքոնյանի հարեւաններին վախեցնելու կամ որեւէ բան հասկացնելու համար:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ենթադրյալ հանցագործները պայթուցիկը գցել են Նոյ թաղամասի 143/1 տան բակ, որը պայթել է, վնասել է Արթուր Բաղդասարյանի տան ապակիները, նրան հասցրել են մոտ 350 հազար դրամի վնաս:

ԾԵԾԿՌՏՈՒՔ՝ ՍԵՎԱՆՈՒՄ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Սեւանի թերակղզում մի խումբ մարդիկ անխնա ծեծել են միմյանց, բանը հասել է դանակահարությանը: Դեպքի վայր են գնացել իրավապահները եւ պարզել են, որ Սեւանի թերակղզու հրապարակում ծեծկռտուք է տեղի ունեցել Ս. Սողոմոնյանի, Ն. Սողոմոնյանի, Ա. Ալեքսանյանի միջեւ, որի ժամանակ ծեծկռտուքն այն աստիճանի է թեժացել, որ դանակով հարվածել են Ս. Սողոմոնյանին, եւ նրան դանակահարված տեղափոխել են հիվանդանոց:

Իրավապահները ձերբակալել են Ա. Ալեքսանյանին: Իսկ ինչի՞ց է սկսվել կռիվը:

Ըստ նախնական վարկածի՝ վիճաբանողները Սեւանի թերակղզում մոմավաճառությամբ են զբաղվում, վիճաբանել են միմյանց հետ, որից հետո հանել են դանակը ու դանակահարել վեճի մասնակիցներից մեկին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՎՏՈՎԹԱՐ

ԿԱՆԱՆՑ ԲԱԽՈՒՄԸ

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ փետրվարի 28-ին վիճաբանություն է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 14:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն է զանգահարել Երեւանի բնակիչ 47-ամյա Նարինե Մ.-ն եւ հայտնել, որ Մեսրոպ Մաշտոցի պողոտա եւ Ամիրյան փողոցի խաչմերուկում բախվել են իր «Range Rover» եւ մեկ այլ վարորդի «Լադա» մակնիշի ավտոմեքենաները, իսկ երբ ինքն իր ավտոմեքենայի ներսում հեռախոսով խոսել է ԱՊՊԱ աշխատակցի հետ, «Լադա»-ի վարորդը քաշել եւ ճանկռել է իր ձեռքերը՝ պահանջելով դրսում խոսել, իսկ ինքը իջնելուց պատահաբար կանգնել է նրա ոտքին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, կարճ ժամանակ անց ոստիկանություն ահազանգ է ստացվել «Լադա»-ի վարորդ, Երեւանի բնակիչ 31-ամյա Էլիզաբետ Մ.-ից, որը հայտնել է, որ «Range Rover»-ի վարորդը ոտքով հարվածել է իրեն:

Դեպքի վայր է մեկնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության կենտրոնական բաժնի հերթապահ խումբը՝ օրվա պատասխանատուի գլխավորությամբ:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 2-րդ վաշտի ծառայողները՝ գումարտակի հրամանատար Արսեն Ստեփանյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Նիկողոսյանի գլխավորությամբ:

Ոստիկաններն ու պարեկները Մաշտոցի պողոտա եւ Ամիրյան փողոցի խաչմերուկից ֆիզիկական ներգործություն կատարելու հիմնավոր կասկածով ձերբակալել եւ բաժին են տեղափոխել երկու վարորդներին:

Դեպքի փաստով ՀՀ ՆԳՆ ոստիկանության կենտրոնական բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 1-ից մարտի 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 205 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿՈՂՄ ԵՆ ԾՐԱԳՐԻՆ

Փետրվարի 29-ին Իջեւան համայնքի սահմանամերձ Վազաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի են ունցել «Էյթի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերեւակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ: Սա երկրորդ քննարկումն էր Վազաշենում: Հայցվող տարածքը գտնվում է Վազաշեն գյուղից 1,5-1,6 կմ հարավ արեւելք, երեւակման տարածքում առանձնացվում է Կարմիր քարի տեղամասը: «Էյթի Գրուպ» ՍՊԸ-ն նախատեսում է հետախուզումն իրականացնել երկրաբանական երթուղիների, մեխանիկական սյունակային հորատանցքերի, հետախուզաառուների անցմամբ եւ նմուշարկման միջոցով: 2023-ի սեպտեմբերին Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին է դիմել «Էյթի Գրուպ» ՍՊԸ-ն, որին պատկանում է Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերեւակման տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման ընդերքօգտագործման իրավունքը: 2023թ. սեպտեմբերի 22-ին Իջեւան համայնքի ավագանին որոշել է հավանություն տալ Վազաշեն բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված 11-059-0146-0001 ծածկագրով հողամասից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար 6,924հա մակերեսով տարածք «Էյթի Գրուպ» ՍՊԸ-ին հատկացնելու՝ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ երկարաձգելով հողի սերվիտուտի պայմանագիրը մինչեւ 2024թ.-ի մարտի 24-ը, հետագայում այն երկարաձգելու հնարավորությամբ: Վազաշեն բնակավայրի վարչական ղեկավար Լորիկ Բաղիրյանը հայտնեց, որ հանրային լսումներին «Էյթի Գրուպ» ՍՊԸ ղեկավարները ներկայացրել են երկրաբանական ուսումնասիրությունների ծրագիրը, լսումներին մասնակցել են Վազաշենի բնակիչները, Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետի տեղակալը, մարզպետարանի աշխատակիցներ, բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներ: Վազաշենի բնակիչները կողմ են արտահայտվել երկրաբանական ուսումնասիրությունների ծրագրին, քանի որ Վազաշենի հողերի մեծ մասը գտնվում է ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ, այդ ծրագիրը սահմանամերձ գյուղում որոշակի թվով աշխատատեղեր կապահովի: Բնապահպանական նկատառումներով ծրագրին դեմ են արտահայտվել Երեւանից ժամանած բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներ: Երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով հորատանցքեր փորելու համար «Էյթի Գրուպ» ՍՊԸ-ն պետք է ստանա «Հայանտառի» թույլտվությունը, քանի որ այդ տարածքը համարվում է անտառային հողերի գոտի: «Էյթի գրուպ» ՍՊԸ-ն գրանցվել է 2019թ. նոյեմբերին, այն հիմնադրել են Տավուշի մարզի Գետահովիտ համայնքում հաշվառված Արմեն Բորիսի Չապուխյանն ու Արաբկիր համայնքում գրանցված Տիգրան Արամի Ավետիսյանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ԵՌՕՐՅԱ ԱՅՑ՝ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը եռօրյա աշխատանքային այցով Նիդերլանդների Թագավորությունում է:

ՀՀ գլխավոր դատախազությունից հայտնում են, որ այցի շրջանակում Աննա Վարդապետյանը մարտի 5-ին հանդիպել է Նիդերլանդների Թագավորության գլխավոր դատախազ Սյու Փրինենին (ՆԹ գլխավոր դատախազների խորհրդի անդամ):

Հանդիպմանը մասնակցել է նաեւ Նիդերլանդների Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վիկտոր Բիյագովը:

ՀՀ գլխավոր դատախազը շնորհակալություն է հայտնել գործընկերոջը հանդիպման պատրաստակամության համար եւ վստահություն հայտնել, որ հանդիպումը որակապես նոր փուլ կտեղափոխի երկու երկրների դատախազությունների միջեւ առկա համագործակցությունը:

Գլխավոր դատախազների զրույցի ընթացքում, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել քրեական գործերով համագործակցության արդյունավետության բարձրացմանը, փոխգործակցության շրջանակում շարունակական վերապատրաստումների միջոցով դատախազների մասնագիտական կարողությունների զարգացման անհրաժեշտությանը:

Այս համատեքստում Աննա Վարդապետյանը կարեւորել է Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության աջակցությամբ իրականացվող ծրագիրը՝ ուղղված Հայաստանի բոլոր դատախազների հաղորդակցման հմտությունների արդյունավետության բարձրացմանն ու զարգացմանը:

ՀՀ գլխավոր դատախազը գործընկերոջ հետ զրույցում անդրադարձել է Երեւանում նախորդ տարի կայացած՝ դատախազության հիմնադրման 105-ամյակին նվիրված խորհրդաժողովի արդյունքներին եւ տեղեկացրել, որ այս տարվա ապրիլին կրկին Եվրոպայի խորհրդի աջակցությամբ Հայաստանում կանցկացվի բարձրաստիճան խորհրդաժողով՝ Եվրոպայի խորհրդի եւ անդամ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ:

Խորհրդաժողովի նպատակն է համախմբել Եվրոպայի խորհրդի անդամ մի շարք երկրների բարձրաստիճան դատախազներին եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ քննարկելու այն մարտահրավերներն ու հեռանկարները, որոնք առկա են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում:

Միջազգային գործընկեր կառույցների հետ համագործակցության հարցերին անդրադառնալով՝ Աննա Վարդապետյանը կարեւորել է 2024 թվականին նախատեսվող՝ Հայաստանի եւ Եվրաջասթի միջեւ քրեական գործերով դատական համագործակցության մասին համաձայնագրի կնքումը եւ առանձնացրել շաբաթներ առաջ գրանցված ձեռքբերումը՝ ՀՀ գլխավոր դատախազության ընդգրկումը Շրջակա միջավայրի գործերով դատախազների եվրոպական ցանցում (ENPE)՝ որպես դիտորդ:

Սյու Փրինենի հետ զրույցում ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է նաեւ Դատախազության առաջնահերթությունները՝ ուղղված փողերի լվացման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, կոռուպցիայի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ կիբերհանցագործությունների դեմ պայքարին:

Նիդերլանդների Թագավորության գլխավոր դատախազը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հետ համագործակցությունը խորացնելու պատրաստակամություն է հայտնել եւ անդրադարձել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի:

ՄՈԲԻԼԻԶԱՑՆԵՆՔ ՏԱՂԱՆԴՆԵՐԻՆ

ԱՌԱՋԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության հարցը շատ կարեւոր է, այդ թվում՝ ազգային անվտանգության տեսանկյունից: Այս մասին հայտարարեց Freedom Holding-ի հիմնադիր եւ գլխավոր սեփականատեր Թիմուր Տուրլովը՝ «Հայաստանի կապիտալի շուկաները. ադապտացիայի հեռանկարներ» Հայաստանում առաջին ներդրումային եւ ֆինանսական համաժողովի ընթացքում իր ելույթի ժամանակ:

«Կարծում եմ՝ սա եզակի հնարավորություն է, որը պետք է օգտագործենք, որպեսզի նոր տեխնոլոգիաներ բերենք, մոբիլիզացնենք այն հրաշալի տաղանդներին, որոնցով լի է Հայաստանը: Իրականում, ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության հարցը շատ կարեւոր է, այդ թվում՝ ազգային անվտանգության տեսանկյունից: Որքան բարձր է ֆինանսական համակարգի նկատմամբ վստահությունը, այնքան բարձր է հասարակության բարեկեցության մակարդակը: Որքան շատ են հանրային կազմակերպությունները, այնքան տվյալ երկրում լավ է կազմակերպվում հարկահավաքությունը: Որքան շատ են ներդրողները, այնքան ավելի ակտիվ է տնտեսությունը»,- համաժողովի բացման իր խոսքում ընդգծեց նա:

Թիմուր Տուրլովի դիտարկմամբ՝ որպես ներդրող՝ իրեն հետաքրքիր է այն քննարկումը, թե այսօր ինչ հնարավորություններ գոյություն ունեն Հայաստանի համար, եւ ինչպես կարող են ակտիվորեն օգտագործել այդ հնարավորությունները.

«Ներկայումս «Freedom»-ն ավելի քան 1 մլն դոլարի կապիտալ ունեցող ընկերություն է, որը բազմաթիվ տաղանդավոր աշխատակիցներ ունի Հայաստանում, որոնք շատ ուրախ կլինեն իրենց ներդրումն ունենալ ֆինանսական այս ծրագիրը զարգացնելու գործում: Այդկերպ ավելի կայուն ֆինանսական համակարգ կունենանք եւ ավելի երկարաժամկետ ներդրումներ կկատարենք մեր զարգացման մեջ: Կարծում եմ՝ սա իսկապես կարեւոր քայլ կլինի երկար ճանապարհի համար, որը կնպաստի մեր բարեկեցության աճին, ինչպես նաեւ Հայաստանի եվրոպական ինտեգրացիային հատկապես այն ծրագրերի շրջանակներում, որոնցով հետաքրքրված է Հայաստանի կառավարությունը»:

Բանախոսը նկատեց՝ ֆինանսական շուկաները տարբեր կերպ կարող են զարգանալ. նրանք սկսում են զարգանալ, օրինակ, երբ ներդրողներն ազգային եւ օտարերկրյա արժեթղթեր են ներդնում, նաեւ կորպորատիվ արժետոմսեր եւ պարտատոմսեր:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 37 պատահար. 53 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱՊԵՍ ՉԵՆ ՔԱՆԴՎԵԼ

ArmLur.am-ը գրել էր, որ Երեւանի քաղաքապետարանի հրամանով քանդվելու են Գայի պողոտայի սկզբնամասում՝ Թաթուլ Կրպեյանի անվան այգու եւ Վալենսիա համալիրի միջեւ ընկած ինքնակամ կառուցված բնակելի 8 միավոր տները:

Նշենք, որ քաղաքապետարանի հաղորդմամբ՝ քանդման մասին նախօրոք տեղեկացվել էր բնակիչներին, սակայն, բնակիչների պնդմամբ, ոչինչ էլ նախօրոք չեն իմացել:

ArmLur.am-ը կապ հաստատեց Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» կուսակցության անդամ Իզաբելլա Աբգարյանի հետ (որը եղել է դեպքի վայրում)՝ պարզելու համար՝ հարցին ինչ լուծում է տրվել:

«Իմ տեղեկություններով՝ այսօր հանդիպում է ունեցել քաղաքապետի տեղակալը, որոշ ներկայացուցիչներ հանդիպել են նաեւ բնակիչների հետ, դեռ ընթացքում է, բայց այն, ինչ հասցրեցին այդ օրը քանդել, քանդել են իհարկե»,- մեզ հետ զրույցում ասաց Աբգարյանը:

Աբգարյանի խոսքով՝ նա նաեւ տեղյակ է, որ այդտեղ եղել են ընտանիքներ, որոնք բնակվում էին եւ հիմա դարձել են անօթեւան, սակայն նրանց առաջարկվել են ժամանակավոր կացարաններ:

«Մի ընտանիքի առաջարկվել էր ապրանքները տեղադրել մանկապարտեզում: Այդ մարդիկ, բնականաբանար, դժգոհ են, որովհետեւ դա հարցի լուծում չէ իրենց համար: Քաղաքապետարանը մտադրություն է հայտնել, որ ամբողջը քանդելու է: Այստեղ հարցը նրանում է, որ տեղի է ունեցել ոչ իրավաչափ վարչարարություն, այսինքն՝ մարդկանց չի տրվել խելամիտ ժամանակ, որպեսզի նրանք կարողանան ազատել տարածքը կամ գտնեն իրենց բնակության համար այլ վայր: Այս գործողությունները առաջին օրը բարբարոսաբար իրականացվեցին, իրականացվեցին անապահով մարդկանց նկատմամբ, որոնք չէին կարող իրենց ապաստանել, եւ նույն ժամանակ, բնականաբար, տեսնելով դա՝ մյուսներն արդեն ժամանակ ունեին դիմելու դատարան, իսկ դա քաղաքացու իրավունքն է»,- ասաց Աբգարյանը:

Աբգարյանը նաեւ նշեց, որ տարածքները, որոնք քանդվեցին, մաքսիմալ չափով կանաչ տարածքներ են եղել, որոնք տեղի բնակիչները իրենց ձեռքով են ստեղծել՝ քարերից ու օձերից մաքրելով:

«Իսկ որտեղ մեծ շինություններ են, այդտեղ նրանք չմտան այդ օրը: Սա, իհարկե, սարսափելի անարդար, ոչ իրավաչափ մոտեցում է քաղաքապետարանի կողմից»,- ասաց Աբգարյանը՝ եզրափակելով զրույցը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔԱՂԱՎԻԱՑԻԱ

ԼՈՒՐՋ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿԱ

Հայկական ինքնաթիռների՝ դեպի Եվրոպա թռիչքների արգելքը վերացնելու ուղղությամբ լուրջ առաջընթաց կա. Հայաստանի քաղաքացիական ավիացիան Եվրոպական միության գործընկերների հետ իրականացրել է մեծածավալ աշխատանք: Եվրոպական միության թռիչքային անվտանգության գործակալության կողմից արձանագրված 40-ից ավելի թերությունները վերջին երկու տարիների ընթացքում գրեթե ամբողջությամբ շտկվել են:

«Արմենպրես»-ի հետ զրույցում այս մասին նշեց ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի տեղակալ Ստեփան Փայասլյանը՝ ընդգծելով, որ արգելքի սահմանումից հետո Քաղավիացիայի կոմիտեի եւ Եվրոպական միության թռիչքային անվտանգության գործակալության միջեւ կնքվել է երկու տարվա աջակցության պայմանագիր, որի շրջանակում շուրջ երկու տարի Եվրոպական միության երկու փորձագետներ ամենօրյա աշխատանքներ են իրականացրել ՀՀ քաղավիացիայի կոմիտեի այն վարչություններում, որտեղ արձանագրվել էին ամենամեծ անհամապատասխանությունները:

«Այն ավարտվեց նախորդ տարի՝ 2023 թվականի դեկտեմբերին, որից հետո ամփոփիչ քննարկումներ եղան Քյոլնում, այնուհետեւ՝ Երեւանում, որին ներկա էին Հայաստանում Եվրամիության ներկայացուցչության գրասենյակի եւ ոլորտի մի շարք միջազգային կառույցների ներկայացուցիչներ: Քննարկման ընթացքում արձանագրվեց հսկայածավալ աշխատանքի կատարողական, որն իրականացվել է մեր եւ Եվրոպական միության կողմից:

Այս երկու տարիների ընթացքում բոլոր կանոնները, օրենքները փոփոխելով՝ մենք հասել ենք այն կետին, որ առաջիկայում Եվրամիության մեր գործընկերներին կկարողանանք ներկայացնել արդեն իսկ փոփոխված կանոններով եւ օրենքներով պատշաճ վերահսկողությունը, որը նույնպես մի փոքր ժամանակ կպահանջի»,- ասաց նա:

Փայասլյանը նշեց, որ քննարկմանը նաեւ արձանագրվել է, որ գրեթե ամեն ինչ պատրաստ է առաջիկայում արգելքը վերացնելու գործընթացը սկսելու համար, սակայն դեռեւս կա որակավորված մասնագետների պակասը լրացնելու խնդիր, որին այս պահին քաղավիացիայի կոմիտեն դեռ բախվում է: Ըստ նրա՝ բոլոր գործընթացները եւ աշխատանքները պատշաճ իրականացնելու համար պետք է ունենալ համապատասխան քանակի մասնագետներ, որակավորված տեսուչներ, որոնք շատ նեղ մասնագետներ են: Այս պահին կոմիտեի մասնագետների թիվը 50 տոկոսով պակաս է անհրաժեշտ քանակից:

«Այդ ուղղությամբ էլ կարող եմ նշել, որ կառավարության որոշման փոփոխությամբ 2023 թվականին կարողացանք ստեղծել երկու նոր բաժին, որը շատ կարեւոր էր այս գործընթացներն իրականացնելու եւ թերությունները վերացնելու համար: Ինչպես նաեւ փորձեցինք կարգավորել աշխատավարձերի հարցը, քանի որ այս տեսակետից մրցակցության արդյունքում մասնագետները նախընտրում են աշխատել ավելի բարձր աշխատավարձով ավիաընկերություններում, իսկ այս փոփոխության արդյունքում կկարողանանք լրացնել մասնագետների պակասը: Այս պահին էլ այդ ուղղությամբ լուրջ քայլեր են իրականացվում, մասնավորապես՝ կադրերի վերապատրաստում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան»,-նշեց ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի տեղակալը:

Փայասլյանը ուրախությամբ նշեց, որ նոր փոփոխության արդյունքում առաջին անգամ վերջին 3-4 տարիների ընթացքում Քաղավիացիայի կոմիտեից դուրս եկած եւ աշխատանքի ընդունված մասնագետների բալանսը փոխվել է:

Անդրադառնալով դեպի Եվրամիության երկրներ թռիչքներ իրականացնելու արգելքի վերացման ժամկետներին՝ Փայասլյանը նշեց, որ հստակ ժամկետներ նշելը դեռեւս դժվար է, բայց այն բավականին մոտ է, քանի որ Եվրոպական միության թռիչքային անվտանգության գործակալության կողմից արձանագրված 40-ից ավելի խախտումներն իրավական մասով փակված են:

«Մեզ այս պահին մնում է իրականացնել մի քանի կարեւոր վարչությունների անձնակազմերի համալրումը՝ հասցնելով այն համապատասխան քանակի: Կոմիտեն իր քայլերով ամեն ինչ անում է, որ դա հնարավորինս կարճ ժամկետում իրականացնի: Այս հարցը լուծելուց հետո շատ կարճ ժամկետներում արդեն կդիմենք Եվրոպական միության թռիչքային անվտանգության գործակալությանը՝ արգելքը վերացնելու նպատակով»,- եզրափակեց նա:

Հիշեցնենք, որ 2020 թվականի ապրիլի 4-ին Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն տարածեց հայտարարություն այն մասին, որ Թռիչքային անվտանգության եվրոպական գործակալության եւ ԵՄ մասնագետները փետրվարի 3-7-ը աուդիտ են իրականացրել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեում եւ երկու հայկական ավիաընկերությունում: Աուդիտի արդյունքում արձանագրվել են 40-ից ավելի թերություններ եւ խախտումներ:

ՕՐԱԽՆԴԻՐ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ՝ ԱՐԱՐԱՏՈՒՄ

2023թ. Արցախում տեղի ունեցած սեպտեմբերյան իրադարձություններից հետո Արարատի մարզում բնակություն է հաստատել շուրջ 14 հազար բռնի տեղահանված արցախցի:

Այս մասին ArmLur.am-ին տեղեկացրել են Արարատի մարզպետարանից: Անդրադառնալով արցախցիների զբաղվածությանը՝ մեզ փոխանցեցին, որ մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ներում աշխատանքի են անցել տարբեր մասնագիտությամբ 16 անձ: Միեւնույն ժամանակ հայտնեցին, որ մասնավոր զբաղվածության վերաբերյալ մարզպետի աշխատակազմում տեղեկատվություն առկա չէ: «Կառավարության կողմից աջակցություն են ստացել եւ շարունակում են ստանալ եւ՛ սննդի, եւ՛ անկողնային պարագաների, եւ՛ հիգիենայի պարագաների տեսքով, ինչպես նաեւ ՀՀ կառավարության կողմց հաստատված ծրագրերով ֆինանսական աջակցություն: Մեր մարզի սպորտդահլիճներում եւ հյուրատներում բնակվող Արցախից բռնի տեղահանված անձինք չկան»,- հայտնեց մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մարինե Ստեփանյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՏԱՐԱԶ

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

Մարդկության պատմության զարգացման ընթացքում մարդիկ սկսել են հագուստ կրել դեռեւս քարե դարում՝ սկզբում տերեւների միջոցով ծածկելով մարմինները, ապա՝ մանածագործության ի հայտ գալուց հետո, ստեղծվել են առաջին կտորներն ու հագուստները: Ի սկզբանե հագուստն ուներ պաշտպանական նշանակություն. այն պաշտպանում էր խոնավությունից, փոշուց, քամուց, սակայն ժամանակի ընթացքում այն գեղագիտական նշանակություն է ձեռք բերում եւ սկսում ցույց տալ մարդու դիրքը հասարակությունում:

Տարբեր տարածաշրջաններում հագուստը տարբեր էր՝ պայմանավորված բնակլիմայական պայմաններով, մշակույթով եւ առկա հումքով: Ավելի ուշ շրջանում, երբ ձեւավորվել եւ զարգացել են ճարտարապետությունն ու նկարչությունը, հագուկապի մշակույթը նույնպես զարգացում է ապրել: Տարբեր երկրների միջեւ առեւտրկան կապերն ու ճանապարհորդությունները է՛լ ավելի են զարգացրել հագուստի արտադրությունը: Այս ընթացքում էլ տարբեր մշակույթ կրող մարդիկ միմյանցից սկսվել են տարբերվել իրենց ազգային տարազով, որն արտացոլում է իրենց մտածողությունն ու ինքնությունը, ազգային խառնվածքը:

Դարեր շարունակ ազգային տարազները ենթարկվել են բազմաթիվ ազդեցությունների եւ փոփոխությունների մինչեւ վերջնական ձեւավորվելը: Յուրաքանչյուր տարածաշրջանում տարազի գույները արտահայտել են բնության մեջ առկա պիգմենտները: Հայկական տարազի մեջ գերակշռում են չորս տարրերքի գույները, որոնք, 14-րդ դարի հայ փիլիսոփա Գրիգոր Տաթեւացու վկայությամբ, արտահայտում են երկրի սեւությունը, ջրի սպիտակությունը, օդի կարմիրը եւ հրո դեղինը: Ավելի ուշ տարազներում ի հայտ են եկել մանուշակագույնը, որը հատկապես ներառված է հոգեւորականների զգեստներում, կանաչը եւ կապույտը:

Հայ իրականության մեջ տարազը արտացոլում էր կրողի դիրքը, ֆինանսական կարգավիճակը, ամուսնացյալ լինել-չլինելը: Օրինակ՝ կնոջ հարուստ լինելու մասին կարելի էր հասկանալ տարազի վրա առկա ոսկե կամ արծաթե թելերից ասեղնագործություններից:

Միմյանցից տարբերվել են նաեւ առօրյա եւ տոնական հագուստները: Վերջիններս ունեցել են հմայական, պահպանական հատկություն՝ նպատակ ունենալով կրողին հեռու պահել փորձանքներից: Ֆինանսական կարգավիճակը պարզ է դարձել նաեւ կտորի որակից. մետաքսե հագուստներ կրել է հարուստ խավը, իսկ միջին եւ աղքատ խավը կրել է բամբակ, վուշ, բուրդ:

Հայկական կանացի տարազների անբաժան մասն են կազմում ասեղնագործությունները եւ զարդերը, որոնք, ըստ հասարակության մեջ կնոջ ունեցած դիրքի, պատրաստված են եղել արծաթից կամ ոսկուց: Տղամարդկանց տարազը հիմնականում պատրաստված են եղել բամբակից, մետաքսից կամ բրդից: Տղամարդկանց տարազի դեպքում նույնպես ասեղնագործությունն իր ուրույն տեղն ունի: Սակայն, պետք է առանձնացնել նաեւ արծաթյա գոտին, որը հասունության խորհրդանիշ է համարվել, իսկ հարուստ տղամարդիկ ոսկե գոտիներ են կրել:

Հայկական տարազը ձեւավորվել է երկու՝ արեւմտահայկական եւ արեւելահայկական ուղղություններով, քանի որ դեռեւս 4-րդ դարից Հայաստանը մասնատված էր, եւ յուրաքանչյուր տարածքում որոշակի ազդեցությունների էին ենթարկվում թե՛ մշակույթը, թե՛ կենցաղը, թե՛ բարքերը: Սակայն երկու ուղղություններում էլ պահպանվել են տարազի հիմնական բաղադրիչները, տեսքն ու գունապնակը:

Կանացի արտաքին հագուստը բավականին բազմազան է՝ զգեստներ, բաճկոնակներ եւ անթեւ հագուստներ: Հայաստանի արեւելյան շրջաններում ապրող կանայք, կարմիր եւ երկար շապիկի տակից կրել են կարմիր եւ երկար տաբատներ՝ ստորին մասում ավելի թանկարժեք գործվածքից: Արեւմտյան Հայաստանի կանացի զգեստները ձեւով համարյա նույն են եղել, սակայն որոշակի տարբերություններով. շապիկը սպիտակ էր, պարտադիր առկա էր ասեղնագործությունը եւ գոգնոցը: Կնոջ հագուստի մաս են կազմել նաեւ տրեխները, կոպին (գլխարկ) եւ փուշին՝ թաշկինակը: Որոշ շրջաններում հագուստի անբաժան մաս է կազմել նաեւ գլխաշորը եւ քողը, որոնք հաճախ ցույց են տվել կնոջ դիրքը: Օրինակ՝ Սյունիքում կանայք ամուսնությունից հետո սպիտակ կտորով փակել են բերանը մինչեւ առաջնեկ որդու ծնունդը: Դա խորհրդանշել է նորահարսի կարգավիճակը, որը որդու ծնունդով փոխվել է տանտիրուհու կարգավիճակի: Արեւմտահայաստանի որոշ շրջաններում կանայք սկսել են գոգնոց կրել ամուսնության օրը, ինչը խորհրդանշել է արգասաբերություն եւ պտղաբերություն:

Թեեւ Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստանում հայ ավանդական զարդարանքի պարագաները տարբերվել են, բայց ունեցել են որոշ ընդհանրություններ՝ գույնի, ձեւի, իմաստաբանության առումով:

Շարունակելի...

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԸՆԾԱՅԱԲԵՐՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Օրերս Մատենադարանի թանգարանի Ընծայաբերման սրահում տեղի է ունեցել բարերար Վահե Բաղալյանի կողմից Մատենադարանին Հովհաննես երեցի ընդօրինակած Ավետարանի (15-րդ դար) ընծայաբերման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառումն անցկացվել է «Նվիրական անուններ. մատյանների տունդարձը» խորագրով ցուցադրության շրջանակում:

Ի երախտագիտություն մեծարժեք ձեռագրի նվիրաբերման՝ նվիրատուին առաջին անգամ շնորհվել է «Մատենադարանի բարերար» ոսկե մեդալ: Բարերար Վահե Բաղալյանի անունից Ոսկե մեդալը ստացել է նրա որդին՝ Ռոման Բաղալյանը, որը Բաղալյանների ընտանիքի անունից հանդես է եկել շնորհակալական խոսքով:

«Խորին երախտագիտություն եմ հայտնում մեր ազգի պատմության ու մշակութային ժառանգության պահպանմանը նպաստող ձեր անգնահատելի ջանքերի համար: Բաղալյան ընտանիքի համար մեծագույն պատիվ է «Մատենադարանի բարերար» առաջին ոսկե մեդալին արժանանալը: Այն ընդունում եմ պատկառանքով եւ ուրախությամբ՝ գիտակցելով, որ եւս մեկ հնագույն ձեռագիր հասանելի կլինի ինչպես ապագա սերունդների, այնպես էլ միջազգային գիտական հանրության կողմից ուսումնասիրման համար», - նշել է Ռոման Բաղալյանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՌԻՆԳ ԴՈՒՐՍ ԿԳԱՆ

Հայաստանը ներկայացնող բռնցքամարտիկները շարունակում են պայքարը Օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարում:

Մարտի 5-ին Իտալիայում ընթացող օլիմպիական վարկանիշային մրցաշարում ռինգ դուրս կգան Էլիդա Քոչարյանն ու Գուրգեն Մադոյանը:

Քոչարյանի մրցակիցը Մեքսիկայից է, իսկ Մադոյանինը՝ Մոլդովայից:

Նախօրեին՝ մրցումային առաջին օրը, ռինգ էին դուրս եկել 57 կգ քաշային Արթուր Բազեյանն ու 80 կգ քաշային Ռաֆայել Հովհաննիսյանը: Երկու բռնցքամարտիկներն էլ գրագետ մենամարտ են անցկացրել ու 5:0 հաշվով հաղթել իրենց մրցակիցներին: Բազեյանն առավելության էր հասել շվեյցարացի Սեյֆեդին Լետայիֆի նկատմամբ, իսկ Հովհաննիսյանն ուժեղ էր եղել Կանադան ներկայացնող Կեւեն Բեասեջուրից:

Հաջորդ մենամարտում Արթուր Բազեյանը ուժերը կչափի Պուերտո-Ռիկոյի ներկայացուցիչ Ժոզե Տիրադոյի հետ, իսկ Ռաֆայել Հովհաննիսյանը կմենամարտի բելգիացի Նոա Հաջիտի հետ:

ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼ

Շվեյցարիայի Նիոն քաղաքում կայացավ ֆուտբոլի կանանց Եվրոպայի առաջնության որակավորման փուլի վիճակահանությունը:

Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: Հայաստանի կանանց ազգային հավաքականն ընդգրկվեց C լիգայի C4 խմբում, որտեղ նրա մրցակիցներն են Ռումինիան, Բուլղարիան եւ Ղազախստանը:

Յուրաքանչյուր թիմ կանցկացնի 6-ական հանդիպում, որոնք տեղի կունենան ապրիլից-հուլիս ընկած ժամանակահատվածում:

ՀԵՐԹԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ

Բասկետբոլի միջազգային ֆեդերացիան (FIBA) հրապարակել է հավաքականների դասակարգման վարկանիշային հերթական ցուցակը:

Այս մասին հայտնում է բասկետբոլի ֆեդերացիան: Հայաստանի հավաքականը, նախորդ ցուցակի համեմատ, նահանջել է 1 հորիզոնականով ու հիմա 84-րդն է աշխարհի 160 ընտրանու թվում: Հայաստանի ազգային հավաքականը 2024 թվականի հունիսի 21-23-ը ընկերական մրցաշարի կմասնակցի ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում:

«Aeroflot Open 2024»

Հայաստանը ներկայացնող շախմատիստները շարունակում են պայքարը «Aeroflot Open 2024»-ում:

4 խաղափուլից հետո մրցաշարի առաջատարներն են ռուս գրոսմայստերներ Ալեքսանդր Գրիշչուկը եւ Իլյա Իլյուշենոկը, ովքեր ունեն 3.5 միավոր:

Հայ գրոսմայստերներ Հովիկ Հայրապետյանը, Հայկ Մարտիրոսյանը, Սամվել Տեր-Սահակյանը եւ Մանուէլ Պետրոսյանն ունեն 3 միավոր եւ գտնվում են համապատասխանաբար 3-րդ, 11-րդ, 12-րդ եւ 16-րդ հորիզոնականներում:

ՖԻԴԵ-ի վարպետներ Էրիկ Հակոբյանը եւ Ալեքս Սահակյանն ունեն 2.5 միավոր:

●Մարտի 26-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Սամվել Երվինյան. 50 տարի ջութակի հետ» համերգը: Տոմսերի արժեքը՝3000-20000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է աշխատել որպես ուսուցիչ:
Համլետ Սահակյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաեւ՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող եւ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը:
Տիգրան Վիրաբյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է՝ ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Լրագրող Արտյոմ Երկանյանն իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է սպարապետ Վազգեն Սարգսյանի նկարը՝ կից գրելով. «Ողբերգությունից 1 ամիս առաջ էր»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-9 - 12 + 4 + 9
Կոտայքի լեռներ	-8 - 12 + 5 + 8
Կոտայքի նախալեռներ	-5 - 8 + 8 + 10
Գեղարքունիք	-8 - 13 +3 + 6
Լոռի	-6 - 10 + 8 + 10
Տավուշ	-4 - 7 + 8 + 11
Արագածոտնի լեռներ	-8 - 12 +3 + 6
Արագածոտնի նախալեռներ	-5 - 7 + 8 + 11

Արարատ	-4 - 7 +11 + 13
Արմավիր	-4 - 8 +10 + 13
Վայոց ձորի լեռներ	-3 - 7 +3 + 6
Վայոց ձորի նախալեռներ	-3 - 7 +10 + 12
Սյունիքի հովիտներ	-4 - 7 +11 + 14
Սյունիքի նախալեռներ	-9 - 13 +7 + 10
ԼՂՀ	-9 - 10 +7 + 9
Երեւան	1 - 3 + 8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.3.2024**
Հասցեն՝ Գերադրունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*